# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

## ՀՐԱՄԱՆ № 80-Լ

«01» 10 2025թ. ք. Երևան

### ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Արթուրի Մուրադյանին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազի պաշտոնին փոխադրելու և Գևորգ Դավթի Սարգսյանին Տավուշի մարզի դատախազի պաշտոնին փոխադրելու մասին ՀՀ գլխավոր դատախազի 29.09.2025թ.՝ համապատասխանաբար՝ N 416-Ա և N 417-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ու մ  ե մ՝**

1. Կատարել Ա. Մուրադյանի կողմից՝ Տավուշի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Գ. Սարգսյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

Գրիգորյան Լիլիթ - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

***Հանձնախմբի անդամներ՝***

Աղասարյան Հովհաննես- Տավուշի մարզի դատախազի տեղակալ

Առաքելյան Ռուբեն - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ

| | |
|---|---|
| Նազարեթյան Արմինե - | Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ |
| Ղահրամանյան Մարուշ - | Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար |
| Մանուկյան Լիաննա - | Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ |
| Մելքումյան Աննա- | Տավուշի մարզի դատախազության տարածքային բաժնի պետ: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2025 թվականի հոկտեմբերի 20-ը:

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ** ______________ **Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**